



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

29.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԱՅ-ԼՕ-2020/271

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզպետարան
Մասնակից՝ «Անտիբակ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Անտիբակ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Պ. Գուրոյանի, ներկայացուցիչ՝ Կ. Նավասարդյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով հրատապ մեկ անձ, հականեխիչ հեղուկների
ծեռքերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 04.12.2020թ.-ի թիվ 26/26-1/17996-2020 գրությամբ «Անտիբակ»
ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք
չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված
ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ա Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Տավուշի մարզպետարանի 30.11.2020թ. թիվ 01//06946-2020 գրության հիման վրա, 04.12.2020թ.-ին «Անտիբակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 04.12.2020թ.-ին:

07.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/271 համարի ծածկագիրը:

10.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

2. ՀՀ Տավուշի մարզպետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Տավուշի մարզպետարանը 30.11.2020թ. թիվ 01//06946-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ի կատարումն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջի, կից ներկայացնում եմ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպված ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից Անտիբակ ՍՊԸ-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Անտիբակ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Անտիբակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 07.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Անտիբակ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.12.2020թ.-ի թիվ 26/26-1/17996-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ ֆինանսների նախարարության ՍՅ-ԼՕ-2020/271 գրությամբ նախաձեռնել է ընթացակարգ «Անտիբակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ինչի հետ կապված հայտնում եմ Ձեզ, որ 2020 թվականի նոյեմբերի 16-ին մասնակցել ենք ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպված ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04 ծածկագրով մեկ անձից գնման գործընթացին, այնուհետև 16.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով ֆիքսվել է, որ Մասնակիցներից «Լեյկո» ՍՊԸ-ն և «Անտիբակ» ՍՊԸ-ն ներկայացրել են հրավերով սահմանված Հավելված 1.1-ը թերի, մասնավորապես ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ, թե նշյալ արտադրանքի փաթեթավորումը քանի լիտր է, նյութում ալկահոլի պարունակության չափը տոկոսային արտահայտությամբ, ՀՀ ԱՆ հրահանգի հրամանի ամսաթիվը և համարը, ապրանքի պահպանման կոնկրետ ժամկետը, կցել նաև որակի սերտիֆիկատը, ինչի հիման վրա որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և պահանջել հրավերով նախատեսված ճշգրտված փաստաթղթերը ընդհանուր մասնակցել են երեք ընկերություններ, պահանջվող փաստաթղթերը մեր կողմից սահմանված ժամկետում ուղղարկվել է պատվիրատուին, որը համաձայն 18.11.2020թ.-ի թիվ 3-րդ արձանագրությամբ ֆիքսվել է, որ միայն «Անտիբակ» ՍՊԸ-ն է ներկայացրել պահանջվող փաստաթղթերը և որոշվել է դիմել ՀՀ ԱՆ՝ պարզաբանում ներկայացնելու համար և 24.11.2020թ.-ի թիվ 4-րդ արձանագրությամբ որոշման 1-ին կետով որոշել է մերժել «Անտիբակ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ ըստ ՀՀ ԱՆ պարզաբանման «Անտի-բակ» միջոցը չի համապատասխանում մրցույթի տեխնիկական բնութագրին, քանի որ նվազագույնը 70% ալկոհոլ պարունակելու փոխարեն պարունակում է 60-75% և միջոցը համապատասխանում է օժանելիքակոսմետիկական միջոցներին ներկայացվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին, այլ ոչ թե ախտահանիչ միջոցների և միջոցը չունի ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով

հաստատված մեթոդական հրահանգ և 2-րդ կետով որոշել է գների նվազեցման շուրջ հրավիրել բանակցություն՝ «Խաչպար» ՍՊԸ-ին և «Լեյկո» ՍՊԸ-ին, իսկ 27.11.2020թ.-ի թիվ 5-րդ արձանագրությամբ մրցույթը հայտարարել է չկայացած, քանի որ բանակցային փուլին մասնակիցները չեն ներկայացել:

Հարգելի պարոն Օհանյան, վեյոգրյալի հետ կապված ցանկանում եմ հայտնել, որ մեր ընկերությունը հականեխիչ հեղուկ/ալկոհոլ, սկսել է արտադրել 2020թ.-ի սկզբից և նման միջոց արտադրելու համար ՀՀ-ում, որպես դասակարգիչ կա միայն օծանելիքակոսմետիկական միջոցներին ներկայացվող տեխնիկական կանոնակարգ, իսկ ախտահանիչ միջոցների դասակարգ չկա, ուստի ցանկացած արտադրող ուզած թե չուզած ախտահանիչ հեղուկ արտադրելու համար, պետք է իր արտադրանքը գրանցի օծանելիքակոսմետիկական միջոցներին ներկայացվող տեխնիկական կանոնակարգով, ինչն էլ մեր կողմից կատարվել է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների, իսկ այն փաստը, որ ալկոհոլի պարունակությունը պետք է լինի նվազագույնը 70% իսկ մեր առաջարկածը 60-75%-է, ապա այստեղ ևս հակասություն չկա քանի որ եթե պահանջվում է նվազագույնը 70%, իսկ մեզ մոտ 60-75% է, այս դեպքում մեզ մոտ ևս սահմանված է կանոնակարգի նվազագույն և առավելագույն շեմը, հետևաբար մենք չչեղվելով սերտիֆիկատային ցուցանիշներից տվել ենք միջակայք, որ մեր առաջարկածը մինչև 75%-է, իսկ 75-ը մեծ է 70-ից և մեր մատակարարվելիքը լինելու է ոչ պակաս 70%, իսկ եթե այս հանգամանքը իրենց համար պարզ չէր, ապա շտկման ժամանակ պարտավոր էին պահանջել հստակեցնել սույն փաստը, այլ ոչ թե, երբ արդեն շտկման հնարավորություն չկա կանգնեցնեին փաստի առաջ:

Մենք մինչև, հականեխիչ հեղուկի արտադրություն սկսելը, դիմել ենք ՀՀ առողջապահության նախարարությանը, որպեսզի հասկանանք թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ նման նյութ արտադրելու համար և մեզ ուղղորդել են, որ պետք է դիմենք «Սրանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ տեխնիկական պայմաններ ստանալու համար և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին համապատասխանության սերտիֆիկատ ստանալու համար, ինչն էլ մեր կողմից կատարվել է և տվյալ մարմինները՝ 14.04.2020թ.-ին և 05.05.2020թ.-ին մեզ տրամադրել են համապատասխանաբար՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ և ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ, որից հետո սկսել ենք արտադրությունը և վաճառքը, արտահանել ենք Ռուսաստանի դաշնություն և ոչ մի խնդիր չենք ունեցել կապված թե որակի հետ և թե փաստաթղթերի հետ, ինչպես նաև մասնակցել ենք սույն ընթացակարգով քննվող գնման գործընթացին և երբ մեզ մերժեցին

այն պատճառաբանությամբ, որ անհրաժեշտ է առողջապահության նախարարի հրամանով հաստատված մեթոդական հրահանգ, այսինքն այդ մասին իմանալու պահից կրկին դիմեցինք ՀՀ առողջապահության նախարարություն, հանդիպեցինք փոխնախարարի հետ, ով մեզ ասաց, որ այդ հարցով պետք է դիմել ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին, որից հետո դիմեցինք ՊՈԱԿ-ին, որտեղ մեզ հայտնեցին, որ իրենք նման մեթոդական հրահանգ չեն կարող տրամադրել, քանի որ չունեն համապատասխան լաբորատորիա և նման լաբորատորիա պլանավորում են ունենալ հաջորդ տարվա կեսերին, ինչպես նաև հայտնեցին, որ ՀՀ-ում ոչ ոք մեզ չի կարող այն տրամադրել, քանի որ COVID-19-ը նոր հիվանդություն է և մեր պետությունը պատրաստ չի եղել նման լաբորատորիաներով և խորհուրդ տվեցին դիմել Ռուսաստանի դաշնությանը և ի հավաստումն իմ խոսքերի, բողոք քննող անձին խնդրում եմ տրամադրել ժամկետ, որպեսզի ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից վերցնեն տեղեկանք այն մասին, որ իրենք ներկայումս նման մեթոդական հրահանգ չեն տրամադրում:

Ստացվում է հետևյալ պատկերը, մենք արտադրում ենք ապրանք ՀՀ տարածքում, ՀՀ ներպետական ընթացակարգերով ստանում ենք համապատասխանության սերտիֆիկատ և տեխնիկական պայմաններ, կազմակերպում ենք վաճառքը ՀՀ տարածքում և արտահանում ենք, մասնակցում ենք գնման գործընթացին, ճանաչվում ենք 1-ին տեղ զբաղեցնող պարզվում է, որ կա ինչ-որ մեթոդական հրահանգ, որը ևս անհրաժեշտ է ունենալ բայց Հայաստանը նման կառույց չունի որը կարող է մեզ տրամադրել նման հրահանգ և արդյունքում մեզ ներառում են սև ցուցակում, ինչը առողջ տրամաբանությունից դուրս է:

Հարգելի պարոն Օհանյան, այս ընթացակարգը ըստ էության քննում է մասնակցի այսինքն մեր վարքագիծը կոնկրետ գնման գործընթացի մասով, որտեղ մեր կողմից թույլ չի տրվել գնումների մասին օրենքով նախատեսված ընթացակարգերի չարամտորեն խախտումներ, այլ ներպետական ընթացակարգերի բացակայության հետևանքով ոչ միայն զրկվում ենք կոնկրետ այս ընթացակարգով, որպես հաղթող մասնակից հետևաբար արդյունքում շահույթ ստանալուց, այլ նաև հետագա երկու տարվա ընթացքում զրկվում ենք, որևէ գնման գործընթացի մասնակցելուց, որը կկազմակերպվի պետության կողմից և ստացվում է, որ մեր ընկերությունը կարող է ենթարկվել պատասխանատվության, մեղսագրվող արարքի մեջ չունենալով մեղք, ուստի գտնում ենք, որ նման դեպքում անթույլատրելի և անտրամաբանական է որպեսզի «Անտիբակ» ՍՊԸ-ն ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված՝ 23.01.2020թ.-ի ՍՅ-ԼՕ-2020/271 ծածկագրով «Անտիբակ» ՍՊԸ-ին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը մերժել:

4. ՍՅ-ԼՕ-2020/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Տավուշի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հակաանեխիզ հեղուկների ձեռքբերման նպատակով 11.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Անտիբակ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.11.2020թ.-ի նիստի թիվ 02 արձանագրության 3 կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Անտիբակ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով սահմանված հավելված 1.1-ը թերի, մասնավորապես՝ ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ, թե նշյալ արտադրանքի փաթեթավորումը քանի՞ լիտր է, նյութում ալկոհոլի պարունակության չափը տոկոսային արտահայտությամբ, ՀՀ ԱՆ հրահանգի հրամանի ամսաթիվը և համարը, ապրանքի պահպանման կոնկրետ ժամկետը և կցված չէ որակի սերտիֆիկատը, որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «Անտիբակ» ՍՊԸ-ից պահանջել հրավերով նախատեսված ճշտված փաստաթղթերը:

iv. Հանձնաժողովի 18.11.2020թ.-ին կայացված նիստի թիվ 03 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Անտիբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, և հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.21 և 8.22 կետերը, որոշել է ՀՀ Տավուշի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով «հակաանեխիզ հեղուկների» ձեռքբերման մրցույթի գնման ընթացակարգը կասեցնել՝ մինչև համապատասխան պետական մարմնի կողմից կտրամադրվի մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքը:

v. Հանձնաժողովի 24.11.2020թ.-ին կայացված նիստի թիվ 04 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն տվյալը, որ «Անտիբակ» ՍՊԸ-ի «Անտիբակ» միջոցը չի համապատասխանում մրցույթի տեխնիկական բնութագրին, քանի որ նվազագույնը 70% ակրոհոլ պարունակելու փոխարեն պարունակում է 60-75%, միջոցը համապատասխանում է օժանելիքակոսմետիկական միջոցներին ներկայացվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին, այլ ոչ թե ախտահանիչ միջոցների, և միջոցը չունի ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով հաստատված մեթոդական հրահանգ, որոշել է «Անտիբակ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

vi. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի պատասխան Պատվիրատուի 18.11.2020թ.-ի թիվ 03//06874-2020 հարցմանը տրված գրության համաձայն՝ հայտնել են, որ «Անտիբակ» ՍՊԸ-ի «Անտիբակ» միջոցը չի համապատասխանում մրցույթի տեխնիկական բնութագրին, քանի որ նվազագույնը 70% ակրոհոլ պարունակելու փոխարեն պարունակում է 60-75%, միջոցը համապատասխանում է օժանելիքակոսմետիկական միջոցներին ներկայացվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին, այլ ոչ թե ախտահանիչ միջոցների, և միջոցը չունի ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով հաստատված մեթոդական հրահանգ:

vii. ՀՀ առողջապահության նախարարության կողմից, ի պատասխան Մասնակցի 11.12.2020թ.-ի թիվ 41876-2020 հարցմանը տրված գրության համաձայն՝ հայտնել են, որ ախտահանիչ միջոցները համարվում են պետական գրանցման և սանիտարահամաճարակային վերահսկողության ենթակա ապրանք, և դրանց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի մայիսի 7-ի թիվ 17-Ն հրամանով, համաձայն որի ախտահանիչ միջոցները սահմանված կարգով պետք է անցնեն ախտահանաբանական փորձաքննություն հավատարմագրված կազմակերպությունների ցանկում ընդգրկված լաբորատոր կենտրոնների կողմից: Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3808 կողով ապրանքի փորձաքննություն իրականացնելու համար հավատարմագրված լաբորատոր կենտրոն ներկայում չկա: Նշված լաբորատոր կենտրոնների ցանկին միանալու և հավատագրվելու համար դիմել է ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղը, սակայն նոր կորոնավիրուսային հիվանդության ախտորոշման աշխատանքներ իրականացնելու պատճառով գործընթացը մնացել է անավարտ: ԵԱՏՄ այլ երկրներում հավատարմագրված լաբորատոր կենտրոնների ցանկը հասանելի է ԵԱՏՄ կայքում՝ [7](http://www.eurasiancommission.org/ru/docs/Pages/IL-</p></div><div data-bbox=)

[OS.aspx](#) հղմամբ: Ախտաբանական փորձաքննությունների իրականացման ժամանակ այդ լաբորատոր կենտրոնը մշակում է նաև ուսումնասիրվող միջոցի կիրառման հրահանգը, որը, ԵԱՏՄ երկրներից մեկում ԱՏԳ ԱԱ 3808 կողով պետական գրանցում ստանալուց հետո և թարգմանվելուց հետո, հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.12.2020թ.-ի թիվ 26/26-1/17996-2020 գրությամբ «Անտիբակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Տավուշի մարզպետարանի կողմից հականեխիչ հեղուկների ձեռքբերման նպատակով 11.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում (*տե՛ս*, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների

իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

«Վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետախիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ «Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա «Վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ «Վճռաբեկ դատարանի» «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ «Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ «Վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետախիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու

և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը (տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից հականեխիչ հեղուկների ձեռքբերման նպատակով 11.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀՏՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Անտիբակ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել իրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում՝ ներկայացված տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ, թե նշյալ արտադրանքի փաթեթավորումը քանի՞ լիտր է, նյութում ալկոհոլի պարունակության չափը տոկոսային արտահայտությամբ, ՀՀ ԱՆ հրահանգի հրամանի ամսաթիվը և համարը, ապրանքի պահպանման կոնկրետ ժամկետը և կցված չէ որակի սերտիֆիկատը: Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Անտիբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, և հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.21 և 8.22 կետերը, որոշել է գնման ընթացակարգը կասեցնել՝ մինչև համապատասխան պետական մարմնի կողմից մասնակցի ներկայացրած

տվյալների իսկության ստուգման արդյունքի տրամադրումը: Հանձնաժողովը 24.11.2020թ.-ին կայացված նիստի թիվ 04 արձանագրությամբ, հաշվի առնելով այն տվյալը, որ «Անտիբակ» ՍՊԸ-ի «Անտի-բակ» միջոցը չի համապատասխանում մրցույթի տեխնիկական բնութագրին, քանի որ նվազագույնը 70% ակտիվ պարունակելու փոխարեն պարունակում է 60-75%, միջոցը համապատասխանում է օժանելիքակոսմետիկական միջոցներին ներկայացվող տեխնիկական կանոնակարգի պահանջներին, այլ ոչ թե ախտահանիչ միջոցների, և միջոցը չունի ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով հաստատված մեթոդական հրահանգ, որոշել է «Անտիբակ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

ՀՀ առողջապահության նախարարությունն՝ ի պատասխան Մասնակցի 11.12.2020թ.-ի թիվ 41876-2020 գրության հայտնել է, որ ախտահանիչ միջոցները համարվում են պետական գրանցման և սանիտարահամաճարակային վերահսկողության ենթակա ապրանք, և դրանց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի մայիսի 7-ի թիվ 17-Ն հրամանով, համաձայն որի ախտահանիչ միջոցները սահմանված կարգով պետք է անցնեն ախտահանաբանական փորձաքննություն հավատարմագրված կազմակերպությունների ցանկում ընդգրկված լաբորատոր կենտրոնների կողմից: Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3808 կողով ապրանքի փորձաքննություն իրականացնելու համար հավատարմագրված լաբորատոր կենտրոն ներկայում չկա: Նշված լաբորատոր կենտրոնների ցանկին միանալու և հավատագրվելու համար դիմել է ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղը, սակայն նոր կորոնավիրուսային հիվանդության ախտորոշման աշխատանքներ իրականացնելու պատճառով գործընթացը մնացել է անավարտ: ԵԱՏՄ այլ երկրներում հավատարմագրված լաբորատոր կենտրոնների ցանկը հասանելի է ԵԱՏՄ կայքում՝ <http://www.eurasiancommission.org/ru/docs/Pages/IL-OS.aspx> հղմամբ: Ախտաբանական փորձաքննությունների իրականացման ժամանակ այդ լաբորատոր կենտրոնը մշակում է նաև ուսումնասիրվող միջոցի կիրառման հրահանգը, որը, ԵԱՏՄ երկրներից մեկում ԱՏԳ ԱԱ 3808 կողով պետական գրանցում ստանալուց հետո և թարգմանվելուց հետո, հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը

կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա

դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու

բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (ՀՀ-ում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3808 կոդով ապրանքի փորձաքնություն իրականացնելու համար հավատարմագրված լաբորատոր կենտրոնի բացակայությամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ա Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.12.2020թ.-ի թիվ 26/26-1/17996-2020 գրությամբ «Անտիբակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/271 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**



ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ